Նիկոլասի և Ելենայի պատմությունը

Նիկոլասն ու Ելենան 10 տարի է երջանիկ ամուսիններ են և ունեն երեք երեխա: Նրանք երկուսն էլ ցանկանում են, որ իրենց ընտանիքը հաստատվի Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հիմքի վրա, և յուրաքանչյուրը ձգտում է կատարել աստվածայնորեն նշանակված իր ընտանեկան պարտականությունները:

Ինչպես մյուս ամուսնական զույգերը, Նիկոլասն ու Ելենան տարաձայնություններ ունեն: Նրանց տարաձայնությունները սովորաբար կապված են փողի հետ: Նիկոլասը լրիվ դրույքով աշխատում է տնից դուրս: Ելենան կարողանում է հոգ տանել իրենց երեխաների համար և մշտապես կառավարել տան գործերը: Բացի այդ, նա երբեմն էլ մասնավոր փոքր գործեր է կատարում: Նիկոլասը կարծում է, որ քանի որ ինքն է տան նախագահողը, ինչպես նաև ավելի շատ գումար վաստակողը, ուրեմն ինքը պետք է վերջին խոսքն ասի, թե ինչպես ծախսեն իրենց գումարները: Ելենայի կարծիքով, քանի որ ինքն ավելի շատ ժամանակ է անցկացնում երեխաների հետ, քան Նիկոլասը, ապա երեխաների հետ կապված որոշումներում իր կարծիքը պետք է վճռորոշ լինի: Վերջերս, առանց Նիկոլասին ասելու, նա երբեմն ծախսել է փողերն այնպես, ինչպես ուզել է:

Նիկոլասը և Ելենան վերջերս քննարկում էին, թե ինչ անել իրենց խնայած գումարի հետ: Նիկոլասը ցանկանում էր մեքենա գնել, որ ավելի հեշտ հասներ աշխատավայր, ինչպես նաև դա օգտակար կլիներ ընտանիքի անդամների համար: Ելենան ցանկանում էր օգտագործել այդ գումարը՝ արձակուրդի ժամանակ երեխաներին մի տեղ տանելու համար, որպեսզի այցելեին իրենց բարեկամներին և միասին զվարճանային, քանի դեռ երեխաները փոքր են:

Նիկոլասի և Ելենայի անհամաձայնությունն արդեն ճնշում է նրանց, բայց որոշումը պետք է կայացվի:

- Ի՞նչ կասեք, ո՞րն է Նիկոլասի և Ելենայի ամենամեծ խնդիրը՝ երբ որոշում են, թե ինչ անել փողի հետ:
- Ձեր կարծիքով, նրանք ի՞նչը պետք է ավելի լավ հասկանան հավասար գործընկերության և նախագահելու մասին՝ իրենց ընտանիքի համար որոշումներ կայացնելու հետ կապված: (Տես նախապատրաստական նյութի 3-րդ բաժինը:)
- Եթե դուք Նիկոլասի կամ Ելենայի տեղը լինեիք, ի՞նչ մոտեցում կցուցաբերեիք ձեր կողակցին՝ որպեսզի միասին, Քրիստոսանման ձևով խորհրդակցեիք այս որոշումը կայացնելու համար:

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved.